

*Նադաշ Մարտիրոսյան
բ.գ.թ., դոցենտ*

*Անահիտ Մենենշյան
բ.գ.թ., դոցենտ*

«Գեներեր և լրագրություն»

առարկայի դասավանդումը. մեթոդական խնդիրներ

Այսօր լրագրողական կրթության առջև խնդիր է դրված վերանայելու դասավանդման մեթոդներն ու առարկայական ցանկը, ներգրավելու դասընթացներ, որոնք ապագա լրագրողների համար կբացահայտեն տեղեկատվության արդի հնարավորությունները, մարդկային ներուժը հնարավորինս արդյունավետ օգտագործող, քաղաքակիրթ հասարակության ձևավորման մեխանիզմները:

«Գեներեր և լրագրություն» դասընթացն այս առումով արդիական է և խիստ անհրաժեշտ. այսօր հայ իրականությունը խնդիր ունի հաղթահարելու կնոջ և տղամարդու հետ կապված մի շարք կարծրատիպեր, որոնք խանգարում են արդյունավետ օգտագործելու կնոջ ներուժը, կառուցելու համաչափ զարգացող, մարդու իրավունքները հարգող և նրա համար հավասար հնարավորություններ ստեղծող հասարակություն:

Դասընթացի նպատակն է լրագրային դաշտ մուտք գործող լրագրողին ծանոթացնել գեներային հիմնախնդիրներին, պատրաստել լրագրողներ, ովքեր իրենց հետագա գործունեության ընթացքում կնպաստեն գեներայնորեն կիրթ, զգայուն հասարակության կառուցմանը:

Դասընթացի խնդիրներն են՝

- ներկայացնել գեներային տեսության հիմնադրույթները, պատկերացում տալ հիմնական հասկացությունների մասին,
- մատնանշել գեներային խտրականությունը հաղթահարելու մեխանիզմները,
- քննել գեներային հարաբերությունների ամուսնաընտանեկան, իրավական, տնտեսական, սոցիալական տեսանկյունները,

- բացահայտել սեռերի դերային տարբերությունների ըմբռնումները աշխարհում և մասնավորաբար հայ իրականության մեջ,
- ներկայացնել կանանց հիմնախնդիրների լուսաբանման յուրահատկությունները հայկական ՁԼՄ-ում,
- համեմատական քննության ենթարկել հայ և արտասահմանյան պարբերականների գեոդերային դիրքորոշումները,
- ուսուցանել գեոդերային տեսանկյունից կիրթ գովազդի պատրաստման մեխանիզմները:

Դասընթացը հատկապես կարևորվում է մերօրյա լրատվամիջոցներում առկա սխալների համատեքստում, սխալներ որոնք ձևավորում են խտրական մտածելակերպ և կարծրատիպեր: Դասընթացն ուսումնասիրողները առավել զգույշ կլինեն իրենց ձևակերպումներում, կնպաստեն գեոդերայնորեն զգայուն հասարակության կառուցմանը:

32-ժամյա դասընթացը բավարար կլինի խնդրի հանդեպ հետաքրքրություն առաջացնելու, ուսանողին անհրաժեշտ գիտելիքներ տալու համար: Ընդ որում, դասընթացի համար հատկացված դասաժամերը հավասարաչափ բաժանվում են դասախոսականի և գործնական պարապմունքների (16/16): Վերջինները հատկապես կարևոր են ստացած տեսական գիտելիքները ամրապնդելու, գործնականում կիրառելի դարձնելու տեսանկյունից:

Հստակեցնենք դասընթացի թեմատիկ ընդգրկումը: Առաջին դասաժամին կներկայացվեն *ներածական* գիտելիքներ գեոդերային տեսության, դրա հետ կապված հասկացությունների (գեոդերային դերեր, գեոդերային կարծրատիպեր, գեոդերային դիսփլեյ, գեոդերային նորմեր և այլն), հասարակության գեոդերային կազմակերպման հարացույցների (հայրիշխանություն, մայրիշխանություն, գիլանիա) մասին, կկարևորվի խնդրի արդիականությունը: Առաջին թեմայի նյութը առավել դյուրին կընկալվի, եթե դրան հաջորդի վերոնշյալ հարացույցների օրինակների քննարկումը, առավելությունների ու թերությունների բացահայտումը:

Հաջորդ թեմայի շրջանակներում արդեն անհրաժեշտ է ապագա լրագրողներին ծանոթացնել *աշխարհում և մասնավորաբար հայ իրականության մեջ առկա գեոդերային հիմնախնդիրներին*: Որոշակի ժամանակային ընդգրկմամբ՝ այս խնդիրների ուսումնասիրությունը կօգնի առավել հստակ պատկերացնել դրանց

առաջացման պատճառներն ու զարգացման հնարավոր միտումները, ուրեմն և առավել ճշգրիտ լուծումներ տալ դրանց: Թեմային հաջորդող քննարկումը կարող է վերաբերել քրիստոնեության մեջ և հայկական ազգային ավանդական համակարգում հայ կնոջ կերպարին, տղամարդ-կին հարաբերություններին: Ընդ որում, կարելի է հորդորել ուսանողներին քննարկմանը պատրաստվելիս՝ չսահմանափակվել տեսական գրականությամբ, նաև զրուցել եկեղեցականի, ազգագրագետի, հոգեբանի հետ:

Կարևոր է, որ ուսանողը ծանոթ լինի *հայրենական և միջազգային կառույցների՝ գենդերային խտրականության վերացման ուղղությամբ իրականացվող քայլերին*: Մանավանդ որ հատկապես վերջինները վաղուց արդեն լրջորեն զբաղվում են հիշյալ խնդիրներով: Ուստի դասընթացի հաջորդ թեման կարող է առնչվել հենց այս ոլորտին, իսկ գործնական պարապմունքի ընթացքում համեմատական քննության առնվեն վերոնշյալ կառույցների՝ այս ուղղությամբ կատարած քայլերը:

Դասընթացի կարևոր և պարտադիր բաժիններից է *կնոջ և տղամարդու կերպարների քննությունը հայ մամուլի պատմության դիտանկյունից*: Թեմայի առնչությամբ կան մի շարք ուսումնասիրություններ, և այդուհանդերձ ճիշտ կլինի գործնական պարապմունքի համար հանձնարարել ուսանողներին՝ ներկայացնելու նախախորհրդային կամ խորհրդային շրջանի որևէ հայկական պարբերականի գենդերային վերլուծությունը որոշակի ժամանակահատվածում:

Դասընթացի հաջորդ երկու թեմաները, թերևս, պետք է նվիրել *գենդերային հիմնախնդիրների քննությանը արդի հայ և արտասահմանյան մամուլի էջերում*: Սա կօգնի ապագա լրագրողներին հստակ պատկերացնել ժամանակակից լրատվական դաշտի խնդիրները գենդերային տեսանկյունից, պարզել կանանց և տղամարդկանց ներկայացվածության աստիճանը և ոլորտները, գենդերային կարծրատիպերի ձևավորման մեխանիզմները, խոսել մասնագիտական պարբերականների մասին:

Առաջին թեմային հաջորդող գործնական պարապմունքի համար ուսանողից ցանկալի է պահանջել դաշտում առկա որևէ պարբերականի գենդերային վերլուծություն, գենդերայնորեն կույր հոդվածների և հասարակության վրա դրանց հնարավոր ազդեցության քննություն, ինչպես նաև գենդերայնորեն զգայուն կամ գենդերային որևէ հիմնախնդիր արծարծող լրագրողական նյութի պատրաստում:

Արտասահմանյան մամուլի էջերում գեներային հիմնախնդիրների կերկայացմանը հաջորդող գործնական պարապմունքի ընթացքում արդեն ուսանողը կներկայացնի արևմտյան որևէ պարբերականի գեներային քննություն, ինչպես նաև ուսանողի կողմից (պայմանականորեն) արևմտյան պարբերականի համար գրված հոդված: Սա կօգնի համեմատական քննության առնել հայ և արևմտյան պարբերականների մոտեցումներն ու աշխատառճը գեներային խնդիրներին առնչվող հարցերում:

Ուսանողներն, այսպիսով, կսովորեն՝ ինչպե՞ս գրել գեներայնորեն զգայուն հոդվածներ, իրենց համար կհստակեցնեն լրագրության անելիքները գեներայնորեն զգայուն հասարակություն ձևավորելու գործում:

Կարծում ենք՝ առանձին թեմայի շրջանակներում արժե անդրադառնալ զանգվածային լրատվության էլեկտրոնային միջոցների գեներային քննությանը: Վերջիններիս դերը՝ իբրև այսօր հասարակական կարծիք ձևավորող թիվ մեկ ինստիտուտի, հատկապես կարևոր է: Թեմայի շրջանակում հարկ կլինի անդրադառնալ հետևյալ խնդիրներին՝ հայ կնոջ և տղամարդու կերպարները հեռուստատեսությունում և ռադիոյում, կնոջը նվիրված հեռուստա և ռադիոհաղորդումների վերլուծություն, մեր իրականությունում առկա գեներային խտրականությունը հաղթահարելու, կարծրատիպերը կոտրելու գործում զանգվածային լրատվության էլեկտրոնային միջոցների գերակա դերը:

Գործնական պարապմունքի համար ուսանողը, դասընթացի ծրագրի համաձայն, կպատրաստի կնոջը նվիրված ռադիո կամ հեռուստահաղորդման սցենար, կներկայացնի դրա գեներային տեսանկյունները, իսկ լսարանային քննարկումները կօգնեն առավել իրատեսորեն գնահատել կատարված աշխատանքը:

Մեր լրատվական դաշտում գեներային տեսանկյունից սխալներ հատկապես շատ են հանդիպում գովազդում և գովազդային նյութերում: Ուստի դասընթացում պետք է պարտադիր տեղ գտնի նաև *գովազդային դաշտի գեներային քննությանը* առնչվող առանձին թեմա, որտեղ կներկայացվեն խնդրին առնչվող նորմատիվ-օրենսդրական դաշտը, գեներայնորեն գրագետ գովազդի պատրաստման մեխանիզմները:

Հաջորդ գործնական պարապմունքի ժամանակ ուսանողները կիրականացնեն գովազդային դաշտում առկա սեքսիզմի դրսևորումների քննություն, կփորձեն պատրաստել գեներայնորեն գրագետ գովազդ:

Թեմատիկ նման ընդգրկումը, գործնական աշխատանքների անցկացումը կօգնեն հասարակական կարծիքի ապագա ձևավորողներին նպաստել մեզնում գեներային հավասարության գաղափարի տարածմանն ու այն իրականություն դարձնելու գործին:

*Нагаш Мартиросян
канд. фил. наук, доцент
Анаит Менемшян
канд. фил. наук, доцент*

Гендер и журналистика

преподавание предмета, вопросы методики

Дисциплина „Гендер и журналистика,, крайне необходимый и актуальный предмет. Задачей дисциплины является ознакомление будущих журналистов с основными проблемами гендера с тем, чтобы в своей профессиональной деятельности они способствовали бы усилению внимания общества к гендерным проблемам.

*Naghash Martirosyan
PhD, Associate Professor
Anahit Menemshyan
PhD, Associate Professor*

The Teaching of the Course in Gender and Journalism

Methodological Issues

The course in Gender and Journalism is topical and challenging. The aim of the course is to familiarize young journalists with gender-related issues, as well as train them to build a gender-sensitive society through their professional activity.